

Առնգակ ի պատասխանի գրութեան Ներսէս Արքեպիսկոպոսին Վ. պօլսի Պատրիարքին ինչ ինչ ամուսնական խնդիրների համար, որով կ'պատուիրէ միանգամայն զգուշանալ և Հայաստանի Ս. Եկեղեցու օրէնքների համաձայն վարվիլ, Ապրիլի 14, Թ. 164

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 23 յունվարի 1880 ամի: Որովհետև ըստ հաւաստութեան վիճակային կոնսիստորիային Հայոց Տփլիսու ի Կուկիայ սուրբ Աստուածածին եկեղեցոյ Տփլիսու զոյ կարեւորութիւն այլ եւս միոյ քահանայի եւ առաջարկեալ սարկաւազ Յարութիւնն Առաքելեան ընդունակութեամբ եւ բարեբարոյ վարուք արժանաւոր է կոչման քահանայութեան, վասն որոյ եւ յանձնել վիճակաւորին Հայոց Տփլիսայ Գեր. Գարբիէլ Արքեպիսկոպոսի վերածել զնա յաստիճան քահանայութեան գլխի սրբոյ Զատիկին ի վերայ այնր եկեղեցոյ համաձայն խնդրոց ժողովրդականաց նորին, եւ զվկայականն մատուցանել ի հաստատութիւն Սինօդիս, միայն այնու զի չյանձնեսցի նմա խոստովանութիւն ժողովրդեան ըստ փորձութեան հասակին, այլ խոստովանութիւն տանիցէ ընկերակից քահանայն մինչ ցհաստանելն նորա յերեսնամեայ հասակ: Զայսմանէ ծանուցանել եւ Կոնսիստորիային եւ Հոգարարութեան Ներսէսեան Ազգային հոգեւոր դպրոցին Հայոց Տփլիսու առանձինն հրամանօք, վերադարձուցմամբ ուսման եւ ծննդեան վկայականացն վասն յանձնելոյ ըստ պատկանելոյն:

Ի 28 յունվարի 1880 ամի: Գծադրութեամբ վերոյգրեալ յայտարարութեան Հոգարարութեան հրամանագրել վիճակային Կոնսիստորիային Հայոց Երեւանայ յայս վերջին անգամ սաստիկս պատուիրել երեցփոխանաց եկեղեցեաց Հայոց Երեւան քաղաքի եւ զործակալաց Նոր Բայազիդու, Երեւանայ, Սուրմալուայ եւ Էջմիածնայ գաւառաց զի նորա անյապաղ վճարեսցեն զսահմանեալ յւրաքանչիւր եկեղեցեաց տարեկան զումարս, եւ զ50ական կոպէկէ մինչ ց50ական կոպէկս ստացեալքս ի պակատեարց ի նոյաւտ թեմական դպրանոցին Երեւանայ, մնացեալ որպէս յանցեալ ամաց, նմանապէս եւ այսուհետեւ անխափան շարունակեսցեն զայս ամ ըստ ամէ:

Ի 28 յունվարի 1880 ամի: Զառաջարկեալ ղիտողութիւն փոխանորդ Գրիգոր Արքեպիսկոպոսի գտեալ օգտաւէտ, տալ հրաման նորին զերապատութեան կառավարել զՆոր Արշալոյս օրիորդական դպրոցն Հայոց Ախալցխոյ, առանձինն Հոգաբարձութեամբ, որպէս ցարդ կառավարէր, եւ առաջարկել հայազգի ժողովրդականաց տեղւոյն ընտրել զնոր հոգաբարձուս ի տեղի հրաժարելոցն վասն Նոր Արշալոյս անուանեալ Հոգեւոր դպրոցին, այնպէս զի առանձին կազմելով իւրաքանչիւր զորոշ հոգաբարձութիւնս, ուսումնասիրական բարենախանձ եռանդեամբ մրցեսցեն եւ կառավարեսցեն իւրաքանչիւր զդպրոցսն իւրեանց, միայն ընդունելով զուսումնական եւ գիրթական ծրագիրս եւ զայլ կարեւոր հրահանգս ի թեմական վերատեսչէ Վրաստանի եւ Իմերեթի:

Ի 6 փետրվարի 1880 ամի: Համաձայն բարեհաճութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս զդտանեցեալ ի զանձարանի Սինօդիս ի պահպանութեան զբանկային տոմ-

սական (չէք) վեց հազար բուքլեաց որ ընդ № 2554, յանուն վիճակին Նոր Նախիջեւանայ եւ Բեսսարաբիոյ հանեալ յերկամեայ արկեղէ ընդ հրամանի սորին առաքել առ վիճակաւոր Առաջնորդ Հայոց վիճակին Նոր Նախիջեւանայ եւ Բեսսարաբիոյ Մակար Արքեպիսկոպոսն տալով զիրաւունս եւ լուծումն զնելոյ վեց հազար մանէթ դրամովք եւ ցարդ բարդեալ տոկոսեօքն զարդիւնաբեր կալուած ինչ յարմարաւոր եւ օգտակար ի Քիշնեւու քաղաքի եւ հաստատելոյ զկալուածագիրն յանուն Թեմական դպրանոցին Հայոց Նոր Նախիջեւանայ եւ Բեսսարաբիոյ եւ ցրացումն յիշեալ դպրանոցին զտարեկան արդիւնս յիշեալ դրամոց կամ նորոգ զնեալ կալուածոց յատկացուցանել առ ժամանակ ինչ ի նպաստ Հոգեւոր դպրոցի Հայոց Քիշնեւի, որ միանգամայն լեալ իբր կետրոն Հայոց ցրուելոց ի Բեսարաբիայ զիրին եւ յարմարին է անդ կազմել իբր զկեդրոնական դպրոց միջակ վասն կրթութեան հայազն մանկանց զտանելոց ի շրջակայս Քիշնեւի, եւ այսպէս յարգել ուղիղ հայախօսութեան օտարաբարբառ մերազնեայ մանկանց եւ կրթութեան նոցա ի հայկական ազգային եւ ի կրօնական զիտելիս, զայսմ ամենայնէ յանձնելով ի խոհեմութիւն եւ ի հեռատեսութիւն զեր. Մակար Արքեպիսկոպոսի Առաջնորդի թեմին առ ի տնօրինել զարժանն, նաեւ պատուիրել Նորին Գերապատուութեան ի զնելն զկալուածս ունել ի նկատի զկայսերական օրէնս որ վասն ընդունելոյ զբարձրագոյն թոյլատրութիւն, ուստի եւ չտալ ումեք կանխաւ դրամս որպէս զի մի ի կորուստ մատենացին դրամքն, եթէ ոչ հետեւեացի թոյլատրութիւն բարձրագոյն. իսկ զբազուած օրագրութեանս տալ ի մասն հաշուարարական վասն տեղեկութեան:

Ի 12 փետրվարի 1880 ամի: Հրամանագրել վիճակային կոնսիստորիային Բեսսարաբիոյ կարգադրել ընդ ձեռն քահանայից եւ զործակալաց այն է Քիշնեւու, Ազրիմանու, Կէրչի, Խարասու — Բազարու, Աիմֆերօպօլու, Օդեսայի, Թէոդոսիոյ, Հրնչեստի եւ այլոց պատշաճաւոր քաղաքաց եւ շրջակայ զիւզօրէից եւ առանձինն հոգեւոր կառավարութեանց Ա. Պետերբուրգայ եւ Մոսկովայի ջան ի զործ զնել օգնել ժողովարար Երեմիայ Եպիսկոպոսի առ ի արդիւնաւորութեամբ ժողովելոյ զկամաւոր տուրս յօգուտ վանից սրբոյն Յակովբեանց, որ է պարծանք ազգի մերոյ. իսկ Շամախոյ կոնսիստորիային պատուիրել ի Բաքու, ի Շամախի, ի Գարբանդ, ի Ղուբայ քաղաքս եւ ի շրջակայ զիւզօրայս, նոյնպէս ցուցանել զզործակցութիւն վերոյիշեալ ժողովարարին ի շրջագայելն նորա եւ համոզել զժողովրդականս առատորօք իւրեանց ձեռնտու եւ նուիրատու լինել յօգուտ այնք վանից: Անկախ զայսմանէ պատուիրել վերոյիշեալ կոնսիստորիայից ի ժամանելն Երեմիայ Եպիսկոպոսի ի վիճակն, յանձնել նմա եւ զամենայն գոյացեալ զանձանակազրամս եւ զայլ նուէրս յանուն Երուսաղէմի, եթէ զտանիցին, եւ զցուցակս նոցին ստորագրութեամբք յանձնողաց եւ ստացողաց դրամոցն մատուցանել Սինօղիս, եւ զայսմ յօժարակամ նուիրատուութենէ հազորդել ի կողմանէ իւրեանց եւ տեղական քաղաքական տեսչութեանց ի տեղեկութիւն:

Ի 12 փետրվարի 1880 ամի: Առ ներկայ յայտարարութիւն վանահօրն Սանահնայ վանից Վարդան Արքեպիսկոպոսի ծանուցանել, թէ Սինօղն օրագրութեամբ իւրով տնօրինեալ է պատուիրելով հրամանաւ իւրով կոնսիստորիային Տփիսեաց ազդել

միաբանի վանուցն այնորիկ Յովսէփ Արեղային Բաժրէտէկեանց ամենայն հնազանդութեամբ խոնարհել ամենայն օրինաւոր հրամանաց վանահօր, եւ պարկեշտութեամբ բազմաւ վարիլ ընդ իւրում միաբան եղբարց, եւ ըստ որում յիշատակեալ ի վանահօրէ յանցանք են դորժեալք ի նմանէ յառաջագոյն ցկազմել օրագրութեան Սինօգի, ուստի հրաւիրել զՎարդան Արքեպիսկոպոսն սիրով ընդունել իրբեւ հայր զՅովսէփ Արեղայն անյիշատար զտանելով առ նա, եւ յայտնելով Յովսէփ Արեղայի զգոյշ կալ յամենայն զնացս իւր եւ մի՛ վշտացուցանել զիւրն վանահայր, եւ եթէ միւսանգամ նկատեսցին ի վերայ նորա՞ որ եւ իցէ յանցանք եւ զանցառութիւնք զօգտաւէտ պատուիրանաւ Վարդան Արքեպիսկոպոսի ստուգեալ ի ձեռն քննութեան, յայնժամ ունի նա զՎարդան փոխադրիլ ի վանուցն, այլ եւ անկանել ընդ խստագոյն պատժովք:

Ի 7 մարտի 1880 ամի: Զկարգադրութիւն Կոնստանտնուպոլսի Շամախույ ի մասին կայից հանգուցեալ նախկին վանահօր Վանուց Սարգիս Վարդապետի Միւրդարէկեան Սինօգս զտանելով բոլորովին հակառակ Եկեղեցական կանոնաց եւ միանգամայն նորոգ հաստատեալ յՕգոստոսիառ Կայսերէ 1013 եւ 1016 յօդուածոցն տպագրելոց ի շարունակութեան 1878 ամի, առ 44 հատորն 4 մասին օրինաց Տէրութեան որք են ըստ այսմ. « Ի վախճանել Կաթողիկոսի ամենայն Հայոց, վիճակաւոր առաջնորդաց Հայոց եկեղեցւոյ եւ փոխանորդաց, կայք նոցա համարին սեպհականութիւն վանիցն Էքմիաժնի. եթէ չիցէ թողեալ ի նոցունց կտակ յօգուտ աստուածահաճոյ ձեռնարկութեանց. նկատողութիւն նոյնպիսի մնացեալ կայից յանձն լինի հոգեւոր իշխանութեան: » Կայք մնացեալ յետ մահուան վանահարց եւ մայրապետաց Հայոց վանուց եւ առհասարակ վանական հոգեւորականութեան մնան յօգուտ նոյն միաբանութեան, որում նորա պատկանին, եթէ ի նոցունց չիցեն թողեալ կտակք յօգուտ աստուածահաճոյ ձեռնարկութեանց: » Ըստ տնօրինութեան մեծաջան աշխատութեամբ Վեհափառ Հայրապետիս մերոյ Տ. Տ. Գէորգայ Գ. յամին 1874, որ վասն կայից եւ զոյից հանգուցեալ կուսակրօն հոգեւորականաց, համարի զկարգադրութիւն Թաղէոս եպիսկոպոսի անվաւեր, վասն զի յիշեալ եպիսկոպոսն յայսմիկ մեղանչեալ է ոչ միայն ընդդէմ Եկեղեցական Կանոնաց, այլեւ Կայսերական օրինաց իսկ զանց առնելով զնորօք, ըստ քմահաճ կամաց իւրոց տնօրինեալ է վասն կայից հանգուցեալ վարդապետին: Առ որ թէեւ պարտէր ենթարկել զԹաղէոս եպիսկոպոսն խստագոյն պատժոյ իրբեւ զյանցաւոր եկեղեցական եւ քաղաքական օրինաց, բայց յայս առաջին նուազի կարգաւով նմա զնիստ յանդիմանութիւն ի խրատ եւ ի զղուշութիւն նորին, պատուիրել զի մի միւսանգամ եւս յայսմիկ տէ՛ վստահացի առանց կանխապէս լուծման Սինօգի, ի զէպս պատահման, ինքնին կարգադրել վասն կայից հանգուցեալ կուսակրօն հոգեւորականաց վանահարց եւ վարդապետաց, կուսանաց եւ մայրապետաց, որպէս եւ ինքնազուխ բաժանեալ է զկայս հանգուցեալ Սարգիս Վարդապետի ում եւ հաճոյ թուեալ է ինքեան: Քանզի ըստ մտաց նորոգ յաւելեալ եւ հաստատեալ յօդուածոց օրինաց, թէեւ կարէ իւրաքանչիւր որ ի կուսակրօն հոգեւորականաց ըստ արական եւ իզական սեռից առնել զկտակ Աստուածահաճոյ շինուածոց, մանաւանդ եւ յատկապէս վերաբերեալ այնմ վանուց, որոյ միաբանութեան անդամ համարի կտա-

կաղիրն, եթէ վաճառար իցէ եւ եթէ միարան, եւ կամ թէ մայրապետ կուսանաց իցէ, եւ թէ միարան կոյս, սակայն այսպիսի կտակ պարտէ առնել կտակագիրն ի կատարեալ առողջութեան կենացն, եւ ոչ երբէք ի վերջին հիւանդութեան, կամ անգորութեան զգայական անգամացն, որպէս ցայսօր արարեալ են ոմանք ի հոգեւորականաց, եւ ապա կտակագիրն ինքնին իւրով յայտարարութեամբ զսկական կտակն պարտի առարել առ Վեհափառ Հայրապետն ազգիս, ըստ նախնի կանոնաց եւ աւանդութեան ազգիս կամ առ Սինօղն սրբոյ Էջմիածնի ի տես եւ ի հաստատութիւն, եւ յորժամ այն կտակ հաւանութիւն գտեալ ի Վեհափառ Հայրապետէն կամ ի Սինօղէն վաւերացուցանի, յայնժամ կտակն այն, եւ կայք այնպիսի հանդուցելոյն ըստ զօրութեան յիշեալ յօդուածոց օրինաց մնան ըստ նկատողութեան Վեհափառ Կաթողիկոսի եւ Սինօղի: Ըստ այսմ ապօրինի համարի կարգադրութիւն Թագէտս եպիսկոպոսի վասն կայից հանդուցեալ Սարգիս Վարդապետի, ուստի եւ պատուիրել նմա առանց պատճառարանութեանց, որպէս զծախսեալ դրամս, նոյնպէս եւ զդոյնաւորի ի վաճառմանէ կայից հանդուցելոյն դրամս ամբողջութեամբ տալ պահպանել ի դանձարանի վիճակային Կոնսիստօրիայի տեղոյն եւ սպասել լուծման Սինօղիս, քանզի մերձաւոր հոգեւոր իշխանութեանց պարտք են միայն ի վախճանել հոգեւորականի միոյ յատուկ եւ զգուշաւոր հսկողութեամբ ցուցակադրել փութով վկայս եւ զգոյս հանդուցելոյն եւ յայտնելով ծայրագոյն հոգեւոր իշխանութեան, սպասել տնօրէնութեան նորին: Իսկ հանդերձապահի Աթոռոյս հրամանադրել զստացեալ նորս մի հասարակ պղնձեայ խաչն պարգեւեալ ի կայսերական կառավարութենէն, նոյնպէս եւ զականակուռ վարդապետական խաչն զարդարեալ հասարակ քարամբ մուծանել ի պատշաճաւոր մատենին:

Զվերոյգրեալ բարեկարգ տնօրէնութենէն Նորին Վեհափառութեան հաղորդելով բոլոր վիճակային ատենից (եւ հոգեւոր կառավարութեանց) Հայոց Ռուսաստանի, ի թիւս որոց եւ կոնսիստօրիային Շամախոյ յուշ առնել նոցա զայնոսիկ յիշեալ յօդուածս առաջարկեալս ի Վեհափառ Հայրապետէ ամենայն Հայոց եւ հաստատեալս ի Թագաւոր Կայսերէ ամենայն Ռուսաց եւ պատուիրել ամենից նոցա շրջաբերական հրամանադրութեամբ ի ձեռն հոգեւոր կառավարութեանց եւ զործակալաց յայտնել ընդ ստորագրութեամբ իւրաքանչիւրոցն եղեալ կուսակրօն երկսեռ հոգեւորականաց մերոց, վասն որոյ յայսմ հետէ ըստ այսմ հրահանգութեան վարելոյ թէ ի կտակաւանդութիւնս եւ թէ ի գործողութիւնս զկնի մահուան հանդուցելոյն որպէս զի նախապէս զգուշացեալ ամենեցուն նոցա փոյթ կալցի իւրաքանչիւր որ զհետ շաւղաց նախնի կանոնաց գնալ, պահպանելով միանգամայն զնորահաստատ օրէնս Տէրութեան, որ հայի արդարեւ յօդուտ եւ ի պայծառութիւն եկեղեցւոյս մերոյ, ի յարատեւութիւն ազգային աստուածահաճոյ շինութեանց եւ հաստատութեանց: